ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ ՀԱՅՏԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎԱԾ՝ «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-Ի ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ (ՎՎԲ/KFW) ՏԵՂԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 13 հունիսի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռ. Գևորգյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի դեկտեմբերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտագրերի փոխանակման ձևով կնքված՝ «Գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորու-

թյունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2023 թվականի մայիսի 4-ի N 654-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի դեկտեմբերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտագրերի փոխանակման ձևով կնքված՝ «Գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2023 թվականի մայիսի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Տ .**

1. «Գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի դեկտեմբերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտագրերի փոխանակման ձևով՝ Գերմանական Միջազգային համագործակցության ընկերության և Վերականգնման վարկերի բանկի տեղական գրասենյակներ հիմնելու և Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև համագործակցությունը զարգացնելու նպատակով:

Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառա-

վարությանը կծանուցի, որ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական պահանջները կատարված են:

2. Համաձայնագրի համաձայն՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև զարգացման համագործակցությունը սատարելու նպատակով Երևանում կարող են հիմնվել Միջազգային համագործակցության ընկերության տեղական գրասենյակ (այսուհետ՝ ՄՀԸ գրասենյակ) և Վերականգնման վարկերի բանկի տեղական գրասենյակ (այսուհետ՝ ՎՎԲ գրասենյակ):

Համաձայնագրի 2-րդ կետով սահմանվում է, որ ՄՀԸ գրասենյակն աջակցում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության անունից Տեխնիկական համագործակցության շրջանակում նախատեսված ծրագրերի կատարմանն ու կառավարմանը և ներկայացնում է ՄՀԸ-ն Հայաստանում: ՄՀԸ գրասենյակը կարող է կատարել նաև նախատեսված ծրագրերից դուրս մասնագիտական և վարչարարական այլ գործառույթներ, ինչպես նաև երկրին առնչվող և տարածաշրջանային բնույթի հանձնարարություններ: Գրասենյակն իրավունք ունի սարքավորումներ և վարչարարական աջակցություն տրամադրելու նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ միջոցառումներ իրականացնող այլ կատարող կազմակերպությունների (մասնավորապես՝ կատարող կազմակերպություններ Ֆիզիկատեխնիկական դաշնային ինստիտուտին (ՖՏԴԻ/PTB) և Երկրաբանական հետազոտությունների և բնական պաշարների դաշնային ինստիտուտին (ԵՀԲՊԴԻ/BGR):

Համաձայնագրի 3-րդ կետով սահմանվում է, որ ՎՎԲ գրասենյակը գործընկեր պետությանը և կատարող գործընկեր կազմակերպություններին օգնում է նախապատրաստել և իրականացնել Ֆինանսական համագործակցության շրջանակում Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից խրախուսվող ծրագրերը և ներկայացնում է ՎՎԲ-ն Հայաստանում: ՎՎԲ գրասենյակը կարող է կատարել նաև նախատեսված ծրագրերից դուրս այլ մասնագիտական և վարչարարական գործառույթներ, ինչպես նաև երկրին առնչվող և տարածաշրջանային բնույթի այլ հանձնա-

րարականներ, որոնք վերաբերում են ծրագրերին: Գրասենյակն իրավունք ունի սարքավորումներ և վարչարարական աջակցություն տրամադրելու նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ միջոցառումներ իրականացնող այլ կատարող կազմակերպությունների (մասնավորապես՝ կատարող կազմակերպություններ ՖՏԴԻ/PTB-ին և ԵՀԲՊԴԻ/BGR-ին):

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունն իր ծառայությունները մատուցում է կատարող կազմակերպություններ ՄՀԸ ու ՎՎԲ և իր հանձնարարությամբ գործող այլ կատարող կազմակերպությունների (մասնավորապես՝ ՖՏԴԻ/PTB-ի և ԵՀԲՊԴԻ/BGR-ի) միջոցով, իսկ Հայաստանի Հանրապետության Կառավարությունն այդ կատարող կազմակերպությունների գործընկեր է նշանակում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը ստանձնում է գրասենյակների համար անհրաժեշտ բոլոր ներդրումային և գործառնական ծախսերը, գրասենյակների գործունեությունն ապահովող անձնակազմի (ինչպես գործուղված, այնպես էլ տեղացի կամ տարածաշրջանային մասնագետների) ծախսերը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

3.1. երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության պետական մարմինները պատշաճ հոգածությամբ կապահովեն գրասենյակների անվտանգությունն ու պաշտպանությունը (կետ 7, ենթակետ ա),

3.2. գրասենյակների համար ներմուծված պարագաները, այդ թվում՝ սարքերն ու ավտոմեքենաները, ազատել ներմուծման ու արտահանման բոլոր տեսակի տուրքերից, նավահանգստային ու պահեստային վճարներից, ինչպես նաև այլ պետական վճարներից, և երաշխավորել դրանց անհապաղ բացթողումը (կետ 7, ենթակետ բ),

3.3. ՄՀԸ և ՎՎԲ կատարող կազմակերպություններին և նրանց գրասենյակներին ազատել բոլոր տեսակի ուղղակի հարկերից (կետ 7, ենթակետ գ),

3.4. ՄՀԸ և ՎՎԲ կատարող կազմակերպությունների կամ նրանց գրասենյակների՝ Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերած պարագաները և ստացած ծառայություններն ազատել Հայաստանի Հանրապետությունում գանձվող շրջանառության հարկերից կամ համանման այլ անուղղակի հարկերից. ազատումը կարող է լինել փոխհատուցման կամ այդ հարկերից ազատման եղանակով (կետ 7, ենթակետ դ),

3.5. հաստատել կատարող կազմակերպությունների կամ գրասենյակների՝ հեռահաղորդակցային կապերի, այդ թվում՝ ռադիոկապի և արբանյակային կապուղիների միացման վերաբերյալ դիմումները, օգնել կատարելու բոլոր անհրաժեշտ գրանցումները (կետ 7, ենթակետ ե),

3.6. աջակցել կատարող կազմակերպությունների դիմումներին, որոնք վերաբերում են գրասենյակների աշխատակիցների աշխատանքի թույլտվություններին, ինչպես նաև կացության անհրաժեշտ թույլտվություններին և վիզաներին (կետ 7, ենթակետ զ),

3.7. գործուղված մասնագետներին և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի անդամներին անվճար և անգրավ հիմունքներով տրամադրել անհրաժեշտ վիզա, աշխատանքի և կացության թույլտվություն (կետ 7, ենթակետ է),

3.8. ապահովել ՄՀԸ մասնագետների և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի անդամների՝ 1998 թվականի հուլիսի 27-ի շրջանակային համաձայնագրով սահմանված բոլոր իրավունքները. միևնույն իրավունքները համապատասխան կիրառությամբ ապահովել նաև ՎՎԲ գործուղված մասնագետների և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի անդամների, ինչպես նաև՝ հարկ եղած դեպքում, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ գործող այլ կատարող կազմակերպությունների գործուղված մասնագետների և նրանց հետ նույն հարկի տակ ապրող ընտանիքի անդամների համար (կետ 7, ենթակետ ը):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմա-

նադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2022 թվականի դեկտեմբերի 13-ին և 2023 թվականի փետրվարի 15-ին հայտագրերի փոխանակման ձևով կնքված՝ «Գերմանական Միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

13 հունիսի 2023 թվականի
ՍԴՈ-1692